

Գունավոր հեղափոխություններ. տեսություն և իրականություն

Եթիմյան Գագիկ

Հանգուցային բաներ. ժողովրդական շարժումներ, քաղաքական զարգացումներ, արևելք-արևմուտք հարաբերություններ, միջպետական հակամարտություններ, ԽՍՀՄ-ի փլուզում, քաղաքական տեսություններ

20-րդ դարի պատմությունը լի է մարդկային մտքի արգասիքի բազում դրական ձեռքբերումներով գիտության, մշակույթի, կրթության և բազմաթիվ այլ ոլորտներում, սակայն այն ավելի շատ մեր հիշողության մեջ կմնա իբրև աշխարհավեր 2 պատերազմների, կայսրությունների կործանման, ատելի վարչակարգերը փշրող հեղափոխությունների, համաշխարհային հակամարտ համակարգերի ու դրանց միջև կյանքի ու մահվան դաժան պայքարի դարաշրջան. պատմական հզոր գործընթացներ, որոնք ուղեկցվում էին ժողովուրդների ու պետությունների ճակատագրերի խեղումով, մարդկային միլիոնավոր կյանքերի կորուստներով ու հսկայածավալ ավերածություններով: 20-րդ դարում ծնվեցին հասարակական, քաղաքական զարգացումները ուղղորդող բազմաթիվ տեսություններ¹, կուսակցություններ, հասարակական շարժումներ, որոնք բերեցին անզիջում առճակատումների, արևելք-արևմուտք հարաբերությունների աննախադեպ սրման, սպառնալիցությունների մրցավազքի, քաղաքական ճգնաժամերի: Քաղաքական տիտանների գոտեմարտը՝ ի դեմս ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի, ավարտվեց վերջինիս պարտությամբ և փլուզումով, սակայն ժամանակը ցույց տվեց, որ դա բավարար չէր ԱՄՆ-ի համաշխարհային մենատիրության հաստատման համար, անհրաժեշտ էր մասնատել նաև նոր Ռուսաստանը, նրա հեղինակությունը համաշխարհային քաղաքականությունում դարձնել աննշան, մյուս պետություններին վերածել ԱՄՆ-ի կամակատարի, ոչ ձեռնտու վարչակարգերին փոխել ձեռնոցների նման, դառնալ աշխարհի միակ ու անսահմանափակ տիրակալը: Ահա այս ուղղությամբ է, որ ամերիկյան հատուկ ծառայությունները սկսեցին մեծ աշխատանքներ տանել²: Առանձին հետազոտողներ ուսումնասիրում էին հեղափոխությունների մեխանիզմները, մարդկային հոգեբանությունը դրանց ընթացքում, վարչակարգերի վարքագիծը, զանգվածային շարժումները և շատուշատ այլ առաջին հայացքից ոչ կարևոր թվացող հանգամանքներ, որոնք կբերեին ցանկալի արդյունքի ցանկացած երկրում՝ անցանկալի վարչակարգերից ազատվելու համար:

Դա «թավշյա» կամ «գունավոր» հեղափոխությունների իրականացման մեխանիզմն էր, ինչը ատոմային ռումբից ոչ պակաս հզոր զենք էր դառնում մասսա-

¹ Պոլիտիկիզմ, ազատ հասարակություն, ինդուստրիալ հասարակություն, ինստիտուցիոնալիզմ, լիբերալիզմ, սոցիալիզմ և այլ իզմեր:

² Այսօր ԱՄՆ-ում հաշվվում են մոտ 20 հատուկ ծառայություններ և բազմաթիվ հիմնադրամներ, ինչպես օրինակ «Արևելասեփրայական դեմոկրատական կենտրոնը», Մոռոսի «Բաց հասարակություն» հիմնադրամը, «Ազգային ժողովրդավարական ինստիտուտը», «Ազատ տունը», որոնք ևս ըստ էության հատուկ ծառայությունների գործառույթներ են իրականացնում:

ներին գոմբիացնելու և ցանկալի գործողությունների ուղղորդելու համար³: «Բացառիկ երկրի» ու «Բացառիկ ազգի» համար, ինչի մասին անընդհատ շեփոքահարում են ԱՄՆ-ի գրեթե բոլոր նախագահները, պետությունները կդառնային խամաճիկ տիկնիկներ:

Գունավոր հեղափոխություն եզրույթի հեղինակը ամերիկյան քաղաքագետ, հասարակական գործիչ Ջին Շարպն է⁴, որին ոմանք անվանում են ժողովրդավարության համար պայքարի անձնագոհ առաջամարտիկ, ոմանք էլ՝ հատուկ ծառայությունների գործակալ: Նա երկար ժամանակ զբաղվել է վերոհիշյալ խնդրի ուսումնասիրությամբ, դրան նվիրել տարբեր աշխատություններ⁵:

Զանգվածային շարժումները իշխանափոխության վերածելու խնդիրներով են զբաղվել նաև ամերիկյան շատ քաղաքագետներ, քաղաքական գործիչներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ⁶, որոնք նույնպես հետապնդել են նույն նպատակը՝ Ամերիկայի ոչ հաճո պետությունների վարչակարգերի քննադատության ու ժողովրդավարություն հաստատելու անհրաժեշտության անվան տակ զանգվածային շարժումների հրահրում:

Թավշյա հեղափոխությունը, որ ավելի ուշ ստացավ Գունավոր հեղափոխություն անվանումը, հավաքական հասկացողություն է, որը կիրառվում է զանգվածային շարժումները բնութագրելու համար: Այսպես է ընդունված անվանել այս կամ այն երկրում նախապես ծրագրված զանգվածային բողոքների շարքը, որն ավարտվում է տիրող քաղաքական վարչակարգի տապալմամբ: Թավշյա հեղափոխությունը, որպես կանոն, սկսվում է խաղաղ ցույցերով, իսկ ընթացքը կախված է ամբողջատիրական ռեժիմի հիմքերի ամրությունից և կարող է վերածվել գունավոր հեղափոխության:

Շարպն իր աշխատության մեջ⁷ մանրակրկիտ ներկայացնում է ժողովրդական շարժումների ուսումնասիրման իր եզրահանգումները, քայլ առ քայլ նշում

³ Յուրաքանչյուր առանձին երկրի համար ընտրվում է հեղափոխության խորհրդանիշ, դրա գունային ձևավորում, տվյալ երկրի երիտասարդությանը մոբիլիզացնելու համար օգտագործում են սոցիալական ցանցերը, մշակվում և ցուցարարներին բաժանվում ակտիվ գործողությունների հուշաթերթիկներ և այլն:

⁴ Նա ծնվել է 1928 թվականին, Օհայո նահանգում, Կորեական պատերազմին չմասնակցելու համար դատապարտվել է ազատագրկման, աշխատել է Եվրոպայի մի շարք համալսարաններում, ԱՄՆ-ում հիմնել է Էյնշտեյնի անվան հետազոտությունների կենտրոն: 1990 թվականին խորհրդավարությունով օգնել է Մերձբալթյան հանրապետությունների ցուցարարներին պետական հեղաշրջումների ժամանակ:

⁵ Դիկտատուրայից դեմոկրատիա (անգլ.՝ Albert Einstein Institution) 1973թ., ոչ բռնի գործողությունների քաղաքականություն (անգլ.՝ The Politics of Nonviolent Action):

Դիմադրությունը, քաղաքականությունը և ամերիկյան պայքարը հանուն անկախության 1765-1775 թթ., ոչ բռնի գործողությունների 198 մեթոդներ (անգլ.՝ 198 Methods of Nonviolent Action):

⁶ Michael McFaul Transitions from postcommunism. Journal of Democracy, July 2005.

Michael McFaul Importing Revolution: Internal and External Factors in Ukraine's 2004 Democratic Breakthrough. CDDRL Working Papers, May 2006.

Զբիգնև Բժեզինսկի, Շենրի Քիսինջեր, Միթ Ռոմնի և այլն:

⁷ Դիկտատուրայից դեմոկրատիա (անգլ.՝ Albert Einstein Institution) 1973.

գործողությունների այն շղթան, որը տանում է ատելի վարչակարգերի անկմանը և ժողովրդավարության հաստատմանը: Առաջին հայացքից այն տպավորությունն է, որ հեղինակը հետապնդում է մարդասիրական նպատակներ և ցանկանում, որ պետություններում հաստատվեն իրավահավասար, ժողովրդավարական կարգեր, վերացվի բռնությունը, մարդկանց շահագործումը, կոռուպցիան և բոլոր այդ խնդիրները լուծվեն խաղաղ ճանապարհով, առանց ուժի գործադրման⁸: Բայց բավական է ծանոթանալ Շարպի առաջադրած ոչ բռնի գործողությունների 198 մեթոդներին և հասկանալի կլինի «խաղաղ իշխանափոխության» ամերիկյան բանաձևը, ինչի գործնական դրսևորումները մենք տեսնում ենք Արևելյան Եվրոպայի երկրներից, նախկին ԽՍՀՄ Հանրապետություններից սկսած մինչև Մերձավոր Արևելքի երկրներում ու Հյուսիսային Աֆրիկայի պետություններում: Դրանց արդյունքներն ու հետևանքները կարելի է բնութագրել մեկ դարձվածքով. քաղաքակրթության սև խոռոչներ:

Դիտարկենք գունավոր հեղափոխությունների առաջին ալիքը Արևելյան Եվրոպայում և գնահատենք արդյունքները: Երկար ժամանակ՝ անմիջապես երկրորդ աշխարհամարտից հետո, երբ գաղափարական հողի վրա երեկվա դաշնակիցները ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը, դարձան հակառակորդ թշնամիներ, Միացյալ Նահանգները մտմտում էին սոցիալիստական համակարգի և ԽՍՀՄ-ի փլուզումը: Խնդիրը արտաքինից թվացող գաղափարական հակամարտության մեջ չէր, կապիտալիզմի ու կոմունիզմի մրցակցության մեջ չէր, այլ ավելի ընդգրկուն էր. ո՞վ կտիրապետի աշխարհին, ո՞ր բնեղը կհաղթի, ու՞մ բաժին կհասնի ընդերքի անսպառ պաշարները, երրորդ երկրների էժան ֆիզիկական աշխատուժը, հսկայածավալ շուկաները, ո՞վ կտնօրինի պետությունների բախտն ու ժողովուրդների ճակատագիրը: Այս գործին լծվեցին Կենտրոնական Հետախուզական Վարչությունը, Պենտագոնը, Հետաաքննության Դաշնային Վարչությունը և ամերիկյան բազմաթիվ հատուկ ծառայություններ, որոնց ծախսերը կազմում էին տասնյակ միլիարդներ⁹: Սանձագերծվեց սպառազինությունների մրցակազմը, սոցիալիստական համակարգի երկրներում հրահրվեցին խռովություններ, ցույցեր, զինված ելույթներ, բոլորն էլ Ամերիկայի հովանավորության ներքո: Բայց կար նաև ԽՍՀՄ-ի խիստ վերահսկող աչքը: Արդյունքում ճնշվում էին անկախության ձգտման բոլոր դրսևորումները (Հունգարիա, Չեխոսլովակիա), հաղթահարվում էր սպառազինությունների մրցակազմը, Խորհրդային առաջին մեծ պետությունն էլ մնում էր անսասան:

Չհանելով արդյունքի՝ ԱՄՆ-ն մարտավարական նոր մոտեցումներ մշակեց: Այժմ անհրաժեշտ էր միութենական հանրապետությունների ու Մոսկվայի միջև

⁸ Ոչ բռնի գործողությունների քաղաքականություն (անգլ.՝ The Politics of Nonviolent Action).

⁹ Դավադրություններ նախագծող և իրականացնող առաջին կառույցը 1983թ. ստեղծված «Ժողովրդավարությանը աջակցող Ազգային հիմնադրամ» ոչ կառավարական կազմակերպությունն է, հետագայում հիմնադրվեցին նաև «Ազատության տուն», «Հելսինկյան քաղաքացիական կազմակերպություն» «Ազատ հասարակություն» և նմանատիպ շատ կառույցներ:

սեպ խրել, ինչի իրականացման համար անցած դարի 80-ականների վերջերին բարենպաստ հող առաջացավ: ԽՍՀՄ-ում ԽՄԿԿ գառամյալ գլխավոր քարտուղարներին փոխարինելու եկավ երիտասարդ, բարեփոխիչ ու վերակառուցող, արևմուտքի հաճկատար Միխայիլ Գորբաչովը: Նա էլ միայնակ չէր կարող «օգնել» Արևմուտքին ԽՍՀՄ-ի փլուզման գործում, էթե նրան «ջանասիրաբար չօգներ» նրա քաղաքական թիվ մեկ հակառակորդը՝ իրեն միայն առաջին դեմք պատկերացնող, Ռուսաստանի ապագա նախագահ, ԽՄԿԿ «գերեզմանափոր» Բորիս Ելցինը: Պատմության քմահաճությամբ քաղաքական այս երկու դեմքերի թևքերը քշտած քափուքրտինք «աշխատանքը», որ նրանք կատարում էին Արևմուտքի ծափողջունների ու ջերմ ժպիտների ներքո, ի վերջո ԽՍՀՄ-ը կանգնեցրին աղետի առջև, 70-ամյա քաղաքական հսկան՝ սոցիալիզմի փարոսը, ընկավ անշնչացած: Արևմուտքը հրճվանքի մեջ էր:

Սոցիալիստական երկրներում ծայր առան իշխանության ապամոնտաժման լայնածավալ գործընթացներ: Գունավոր հեղափոխությունների շքերթը, որ սկսվել էր 80-ական թվականների վերջերին Լեհաստանում, շարունակում է իր հաղթարշավը Արևելյան Եվրոպայի ժողովրդավարական երկրներում: Մեկը մյուսի ետևից, դոմինոյի էֆեկտով, ընկնում են կոմունիստական վարչակարգերը Ռումինիայում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում և սոցիալիստական համակարգի Արևելաեվրոպական մյուս երկրներում: Արևմուտքի քաղաքական շրջանների համար իսկապես անսպասելի ու շոնդալից էին հաջողությունները:

Այժմ կարելի էր թեթևացած շունչ քաշել և նախկինում ԽՍՀՄ-ի ազդեցության ոլորտի ներքո գտնվող նոր տարածաշրջաններ ընդգրկել խաղաղ հեղափոխությունների հորձանուտ:

Պատմական այս իրադարձությունները ցույց տվեցին Շարպի ոչ բռնի գործողություններով իշխանափոխության կատարելու բանաձևի սնանկությունը, քանի որ նոր կարգերի հաստատումը ուղեկցվում էր ոչ այնքան խաղաղ ցույցերով, որքան զինված ելույթներով Ռումինիայում երկրի ղեկավարի գնդակահարությամբ, մյուս երկրներում ղեկավարների բանտարկությամբ, Հարավսլավիայի, Չեխոսլովակիայի դեպքում՝ տարածքային ամբողջականության մասնատմամբ:

Գունավոր հեղափոխությունների հաջորդ ալիքը, որն էլ ավելի ավերիչ ու արյունալի էր, տեսնում ենք 21-րդ դարի շեմին: Դրանք բուլղոզերային հեղափոխությունն էր Հարավսլավիայում, վարդերինը՝ Վրաստանում, նարնջագույնը՝ Ուկրաինայում, վարդակակաչներինը՝ Կիրգիզիայում և այլն:

21-րդ դարի 1-ին տասնամյակի գունավոր հեղափոխությունների շարքը

2003-Վարդերի հեղափոխություն Վրաստանում

2004-Նարնջագույն հեղափոխություն Ուկրաինայում

2005-Կակաչների հեղափոխություն Կիրգիզիայում

2005-Գունավոր հեղափոխության փորձ Ուզբեկստանում

2005-Մայրիների հեղափոխություն Լիբանանում

2006-Տերեփուկների հեղափոխության փորձ Բելառուսիայում

2008-Գունավոր հեղափոխության փորձ Հայաստանում

2009-Գունավոր հեղափոխություններ Մոլդովայում, որը հանգեցրեց

խորհրդարանում Կոմունիստական կուսակցության մեծամասնության կորստին 2010-Մեխերի հեղափոխությունը, Երկրորդ Կիրգիզական հեղափոխություն Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ աղյուսակից, հեղափոխությունների մեծ մասը տեղի է ունենում Ռուսաստանին սահմանակից պետություններում: Դա մի կողմից բացատրվում է նրանով, որ Արևմուտքը թշնամացնում էր հարևաններին Ռուսաստանի հետ, մյուս կողմից քաջալերում էր Ելցինի կեղծ դեմոկրատական բարեփոխումներ իրականացնելուն, ինչը կբերեր հենց Ռուսաստանի մասնատմանը: Ավարտվեց 20-րդ դարի մայրամուտին Ելցինյան տխրահռչակ կառավարման շրջանը, ինչը մի փոքր էլ ձգձգվելու դեպքում նաև կտրոհեր հսկա Ռուսաստանը: Իշխանության եկավ ուժային ծառայությունների բովով անցած, հայրենասեր նվիրյալների մի խումբ՝ հզոր պետական գործիչ, հմուտ քաղաքագետ Վլադիմիր Պուտինի գլխավորությամբ, որն ամբողջությամբ խառնեց Արևմուտքի խաղաքարտերը:

Վլադիմիր Պուտինը կարճ ժամանակահատվածում կարողացավ կասեցնել Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական գահավիժումը, երկրի մասնատման վտանգը և իր հերթին անցավ հակահարձակման Արևմուտքի դեմ: Այժմ ԱՄՆ-ի գերակա խնդիրն է դառնում կտրել Ռուսաստանին իր անմիջական հարևաններից, մեկուսացնել նրան միջազգային հարաբերություններում:

Դարձյալ գործի դրվեցին գունավոր հեղափոխությունների մեխանիզմները: Արդյունքում Հարավսլավիայի վերջնական մասնատումը, վրաց-ռուսական կարճատև պատերազմը՝ Վրաստանի համար Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի կորստով, մեծաթիվ գոհեր Կիրգիզիայում և Ուզբեկստանում ժողովրդական հուզումների ժամանակ:

Թերևս ամենից արյունալին գունավոր հեղափոխության 3-րդ ակիքն էր, որն իր հորձանոտի մեջ ընդգրկեց նախ Արաբական աշխարհը, ապա նաև Ուկրաինան:

«Արաբական գարնան» Գունավոր հեղափոխությունները

Երկիրը	Հեղափոխության սկիզբը	Հեղափոխության ավարտը	Տևողությունը	Մասնակիցների թիվը	Չոհերի թիվը
Այժիր	28.12.2010			10.000	8
Թունիս	18.12.2010	14.01.2011	27 օր	200.000	219
Եմեն	18.01.2011			30.000	35
Եգիպտոս	25.01.2011	11.02.2011	17 օր	1.500000	384
Իրան	14.02.2011			100.000	3
Բահրեյն	14.02.2011			5.000	7
Լիբիա	17.02.2011			100000	3000
Իրաք	25.02.2011			100.000	35
Օման	26.02.2011			2000	2

Քաղաքացիական պատերազմների ու իշխանափոխությունների այս շղթան Մերձավոր Արևելքում ստացավ «Արաբական գարուն» ռամանտիկ անվանումը: Այն սկսվեց թունիսյան դեպքերից, երբ մրգերի ու բանջարեղենի մանրավաճառ Մուհամեդ Բուազիզին ի նշան բողոքի ինքնահրկիզվեց: Այս քայլը առաջ բերեց համաժողովրդական մեծ հուզումներ, որոնք վերաճեցին քաղաքացիական պատերազմի: Երկրի ղեկավար Ջին էլ Աբիդին Բեն Ալին փախավ Թունիսից, խռովությունը տևեց 27 օր, մասնակիցների թիվը հասավ 200 հազարի, անկարգություններին գոհ գնաց 200-ից ավելի մարդ, երկրին հասցվեց մոտ 2 մլրդ դոլլարի նյութական վնաս:

Իշխանությունն անցավ հեղափոխական ընդդիմադիր ուժերին, երկիրն ընկղմվեց քաոսի մեջ:

Եգիպտոսում ժողովրդական հուզումները երկրի երկարատև, անսահման իշխանությամբ օժտված ղեկավարի՝ Հոսնի Մուբարակի դեմ սկսվեցին 2011 հունվարի 25-ին: Այստեղ հեղափոխության խորհրդանիշը Թահրիր հրապարակն էր: Քաղաքացիական անհնազանդության մեջ ներգրավվեց մինչև 1.5 մլն մարդ, 17 օր տևած խռովության արդյունքում գոհերի թիվը պաշտոնապես հասնում էր 900-ի, արդյունքում իշխանությունը անցավ ծայրահեղ կրոնական ուղղվածությամբ «Մուսուլման Եղբայրներ» կուսակցությանը՝ Մուհամեդ Մուրսիի գլխավորությամբ:

«Արաբական գարնան» հորդառատ հոսքը քշում, տանում էր անսահմանափակ իշխանությամբ տասնամյակներ կառավարող վարչակարգերը: Արյունալի բախումները ավելի էին սաստկանում: Դրանց հրահրողները՝ ԱՄՆ-ի կառավարող շրջանները, ժողովրդական ուժերին օգնության ցուցաբերելու պատրվակով զինված ստորաբաժանումներ են մտցնում Մերձավոր Արևելքի ինքնիշխան պետություններ, ինչը վերածվում է բացահայտ ինտերվենցիայի Իրաքում, Սիրիայում, Լիբիայում: Իրաքի նախագահ Սադամ Հուսեյինը կախաղան բարձրացվեց, իսկ Լիբիայի առաջնորդ Մուամար Քադաֆին հանձնվեց զազազած ամբոխի դատին, որտեղ էլ գտավ իր դաժան մահը: Դոմինոյի էֆեկտը աշխատեց նաև Արաբական աշխարհում: Հսկայական տարածաշրջանը վերածվեց տնտեսապես ավերված, տարածքային ամբողջականությունը կորցրած, բզկտված, սոցիալապես թշվառ վիճակի հասցված բնակչությամբ պետությունների ու անվերահսկելի տարածքների խառնուրդի: Ահա ինչի էր ձգտում ԱՄՆ-ը, «բաժանիք որ տիրես» սկզբունքը դրվում էր գործի՝ ի շահ անդրօվկիանոսյան մոնոպոլիաների ու քաղաքական շրջանակների:

Շարպի ոչ բռնի գործողությունների դասական օրինակ է ուկրաինական «Մայդանը»՝ իշխանափոխության մոդել, որը քայլառքայլ կրկնում էր նրա մշակած տեխնոլոգիաները: Խռովության կազմակերպիչների համար Շարպի գիրքը դարձավ «Աստվածաշունչ»: Ցավոք, ավելի շատ ընդօրինակվում էին հենց բռնություն առաջացնող գործողությունները՝ դիմադրություն ոստիկանական ուժերին, ան-

հնագանդություն իշխանություններին, զինված խմբավորումների կազմավորում:

ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Վիկտորիա Նուլանդը բլիթներ էր բաժանում «Մայդանի» վրանաբնակներին, քաջալերում նրանց, անձամբ հետևում գործընթացների զարգացմանը¹⁰: Կիևյան դեպքերի արձագանքները ավարտվեցին Օդեսայում արհմիությունների տան հրկիզումով, ինչին գոհ գնացին 130 քաղաքացիներ: Արդյունքում Ուկրաինայի արևելյան շրջանները և Ղրիմը հանրաքվեով անջատվեցին Կիևից, քաղաքացիական պատերազմ սկսվեց Դոնբասում, Ուկրաինայի տնտեսությունը մտավ խոր ճգնաժամ, երկիրն էլ մինչև այսօր քաղաքական առճակատումների մեջ է:

Ժամանակն իր շտկումները մտցրեց Ջին Շարպի ոչ բռնի իշխանափոխությունների տեսության մեջ: Խաղաղ գործընթացների մեխանիզմը օգտագործելի էր հեղափոխությունը ընդամենը սկսելու համար: Գործնականում ոչ մի կառավարություն կամովին չի հրաժարվում իշխանությունից, ինչն էլ հանգեցնում է հուզումների, բախումների, զինված առճակատման: Պատահական չէ, որ Շարպի պահանջները գունավոր հեղափոխության իրագործման ճանապարհին բաժանվում են երեք հիմնական խմբերի:

1. Ոչ բռնի բողոքներ, համոզումներ

2. Հրաժարում համագործակցությունից (սոցիալական, տնտեսական, քաղաքական ոլորտներում)

3. Ոչ բռնի միջամտություն

Եթե առաջին երկուսում ենթադրում են իշխանության դեմ պայքարի համեմատաբար խաղաղ մեթոդներ, ինչպես օրինակ ցույցեր, երթեր, միտինգներ, գործադուլներ, ապա երրորդ խմբի բողոքի ձևերը՝ կեղծ ընտրությունների կազմակերպում, ինքնահրկիզում, մերկացում, սեփական գույքի ոչնչացում, հողերի բռնագրավում և այլն, ամենևին էլ չեն անվանի խաղաղ մեթոդ, իսկ դրանց գործադրումն էլ անպայման կրեթի ամբոխ-իշխանություն բախումների¹¹: Այստեղից եզրակացնում ենք, որ Շարպը ինքն էլ համոզված է, որ խաղաղ իշխանափոխություն չի կարող լինել, և ամբոխի վերածված ժողովրդին աստիճանաբար մղում է քայլերի, ինչի արդյունքում առաջանում է քառու: Դրանից էլ օգտվում են շարժումը ֆինանսավորող անդրօվկիանոսյան ուժերը և այն ուղղորդում իրենց ցանկալի հունով: Ահա այս պատճառով էլ վերոհիշյալ իրավիճակի ստեղծումը ստացել է *կառավարելի քառու* պերճախոս անվանումը: Ստորև ներկայացնում ենք միայն վերջին 70 տարիներին աշխարհի տարբեր կողմերում ԱՄՆ-ի հրահրած հեղաշրջումների ու դրանց փորձերի ոչ լրիվ ցանկը:

¹⁰ ԱՄՆ-ի պաշտոնական շրջանները չեն էլ թաքցնում, որ Ուկրաինայում Գունավոր հեղափոխության նախապատրաստման համար ծախսել են ավելի քան 5 մլրդ. դոլար:

¹¹ Джин Шарп. Теория ненасильственной борьбы, Москва, 2005.

**Հեղաշրջումների և դրանց փորձերի ոչ լրիվ ցուցակը
(20-րդ դարի կեսից մինչև 21-րդ դարի սկիզբը)**

1953	Իրան	1989	Պարագվայ
1954	Գվատեմալա	1989	Թավշյա հեղափոխությունները Արևելյան Եվրոպայի սոցիալիստական-ժողովրդավարական երկրներում
1957	Թայլանդ	1991-2004	Հայիթի
1958-1960	Լատու	1993	Ռուսաստան
1960	Կոնգո	1996	Ուզանդա
1960, 1971, 1980	Թուրքիա	2003	Վարդերի հեղափոխություն Վրաստանում
1961, 1963	Էկվադոր	2004	Նարնջագույն հեղափոխություն Ուկրաինայում
1963	Վիետնամ	2005	Կակաչների հեղափոխություն Կիրգիզիայում
1964	Բրազիլիա	2005	Գունավոր հեղափոխության փորձ Ուզբեկստանում
1963	Դոմինիկյան Հանրապետություն	2005	Մայրիների հեղափոխություն Լիբանանում
1963	Արգենտինա	2006	Տերեփուկների հեղափոխության փորձ Բելառուսիայում
1963, 2009	Հոնդուրաս	2008	Գունավոր հեղափոխության փորձ Հայաստանում
1963, 2003	Իրաք	2009	Գունավոր հեղափոխություն Մոլդովայում, որը հանգեցրեց խորհրդարանում կոմունիստական կուսակցության մեծամասնության կորստին
1964, 1971, 1980	Բոլիվիա	2010	Սեխերի հեղափոխությունը, Երկրորդ Կիրգիզական հեղափոխություն
1965	Ինդոնեզիա	28.12.2010	Ալժիր
1966	Գանա	18.12.2010	Թունիս
1967	Հունաստան	18.01.2011	Եմեն
1968, 1989	Պանամա	25.01.2011	Եգիպտոս
1970	Կամբոջա	14.02.2011	Իրան
1973	Չիլի	14.02.2011	Բահրեյն

1975	Բանգլադեշ	17.02.2011	Լիբիա
1977	Պակիստան	25.02.2011	Իրաք
1983	Գրենադա	26.02.2011	Օման
1984	Մավրիտանիա	2004, 2013, 2014	
1984	Գվինեա	Եվրոմայդան, Ընտրություն միացման համաձայնագրի վերաբերյալ Ուկրաինա	

Կարելի է ավելի երկարացնել վերոհիշյալ շարքը, վերլուծություններ կատարել դրանց շուրջ զանազան տեսանկյուններից, բայց այդքանն էլ բավարար է կատարելու հետևյալ եզրահանգումները և ընդհանրացումները:

- ԱՄՆ-ն ամեն կերպ ցանկանում է պահել իր առաջատար դերը ամբողջ աշխարհում, բոլոր ոլորտներում:
- Այդ ճանապարհին նա չի խորշում ոչ մի քայլից, լինի դա գունավոր հեղափոխության հրահրում, ռազմական ինտերվենցիա կամ ծայրահեղական ուժերի օգտագործում, այլ կերպ ասած ստեղծել կառավարելի քառս ցանկացած պետությունում, դժգոհ զանգվածներին դարձնել գործիք՝ անհաճո իշխանություններին գահընկեց անելու համար:
- ԱՄՆ-ի նպատակն է այս կամ այն տարածաշրջանում գտնվող հումքային մեծ պաշարները, շուկաները, էժան աշխատուժը ամեն գնով պահել իր վերահսկողության ներքո:
- ԱՄՆ-ը ձգտում է աշխարհի հսկայական տարածաշրջաններ ու պետություններ, որոնք փորձում են ոտքի կանգնել կամ ընտրել զարգացման սեփական ուղին, լրկալ կամ տարածաշրջանային զինված ընդհարումների արդյունքում դարձնել ավերված ու ամայի, ծայր աղքատության ու թշվառության հասցված ուրվական բնակավայրեր-տարածաշրջանների, որոնց վերականգնումը կպահանջի տասնամյակներ, հսկայական միջոցներ ու դրանք գործնականում կվերածվեն կիսագաղութների:
- ԱՄՆ-ի այս քայլերը հանգեցնում են ժողովրդագրական մեծ տեղաշարժերի ու առաջին հերթին դեպի դաշնակից Եվրոպա, ինչն էլ վերջինիս կանգնեցնում է հսկայական չլուծվող խնդիրների առջ, ինչի համար պետք է ապավինի ԱՄՆ-ի օգնությանը: Այսինքն՝ նա չի խնայում անգամ իր ամենամերձավոր գործընկերոջը՝ նրան ևս կախման մեջ պահելով իրենից:

Աստիճանաբար գունավոր հեղափոխությունների ոչ բռնի տեսությունն էլ կկորցնի իր արդիականությունը, իսկ ամերիկացիներն էլ նորանոր մեթոդներ կհորինեն աշխարհը իրենց ձեռքում պահելու համար, բայց փոխվում է նաև աշխարհը, հզորանում են պետությունները, քաղաքակրթվելու ամերիկյան ճանապարհը, այլևս ձեռք չի տալիս ժողովուրդներին:

Ժամանակն է, որ աշխարհը պարզ գիտակցի, որ ամերիկյան «գերությունից»

ազատագրման մեկ ճանապարհ կա: Հրաժարվել դոլարի՝ իբրև համաշխարհային փողի գործառույթներից, ստեղծել համաշխարհային փող-արժեղրամ, ինչը կարճ ժամանակահատվածում արմատապես կթուլացնի ԱՄՆ-ի թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական կշիռը աշխարհում, պետություններն ու ժողովուրդներն էլ հնարավորություն կունենան զարգանալու սեփական ընտրությամբ կատարած ճանապարհով¹²

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Sharp Gene. Gandhi Wields the Weapon of Moral Power, Ahmedabad 1960.
2. Michael McFaul Importing Revolution: Internal and External Factors in Ukraine's 2004 Democratic Breakthrough. CDDRL Working Papers, May 2006.
3. Джин Шарп. Теория ненасильственной борьбы, Москва, 2005.
4. Джин Шарп: От диктатуры к демократии. Концептуальные основы освобождения.
5. Michael McFaul Transitions from postcommunism. Journal of Democracy, July 2005.
6. Гапич А., Лушников Д. Технологии цветных революций. М., Риор, 2010.
7. Грант Аракелян. Цветные революции в контексте истории и зеркале современной политики // Академия Тринитаризма", М., 0.1.02.2014.
8. Ukraine: The Resistance Will Not Stop, Margreet Strijbosch, *Radio Netherlands*, November 25, 2004
9. <https://www.google.am/search?q>
10. <https://www.google.am/search?biw=1600&bih=768&ei=bJuoW9bJFu6vrgTqIJr4Cw&q>
11. https://www.google.am/search?biw=1600&bih=768&ei=qpuoW8TgC-zOrgSwwafQBg&q=tavshya+hexapoxutyun&oq=tavsha+&gs_
12. https://www.google.am/search?biw=1600&bih=768&ei=F5yoW6SxM6HmrgT63pegBg&q=gene+sharp&oq=gene+s&gs_
13. <https://www.google.am/search?biw=1600&bih=768&ei=QpyoW6ulAcPPrgSO6qGoCQ&q>
14. <https://www.google.am/search?biw=1600&bih=768&ei=apyoW4qqEsTOrgSFxoGYDA&q=+oranjevaya>

¹² Հողվածը արդեն պատրաստ էր տպագրման, երբ 2018թ. ապրիլին տեղի ունեցավ Թավշյա հեղափոխությունը Հայաստանում: Այն արմատապես տարբերվում է վերոհիշյալ ժողովրդավարական մյուս շարժումներից իր խաղաղասիրական ուղղվածությամբ և իր բացառիկության տեսանկյունից կարիք ունի լուրջ ուսումնասիրության ու վերլուծության:

Цветные революции: теория и реальность

Етимян Гагик

Резюме

Ключевые слова: народные движения, политические развития, отношения восток-запад, межгосударственные разногласия, распад СССР, политические теории

В конце 20 века, в результате бурных политико-географических процессов, в мире с новой силой вспыхнули народные движения, которые американский аналитик, социолог, теоретик Джин Шарп назвал Цветными или Бархатными революциями. В этот период также родились многочисленные теории, партии, руководящие общественные, политические движения, которые привели к бескомпромиссным конфронтациям, к беспрецедентным обострениям юго-западных отношений, к гонке вооружений, к политическому кризису. Противостояние политических титанов в лице США и СССР завершилось проигрышем и распадом СССР, однако время показало, что этого было недостаточно для утверждения всемирного единовластия США. Стало необходимо разделить и Россию, уменьшить ее авторитет в мировой политике, превратить остальные страны в исполнителей воли США, менять невыгодные режимы как перчатки, стать единственным и безграничным властелином мира.

Отдельные исследователи изучали механизмы революций, поведение режимов, массовые движения и многие, кажущиеся неважными, обстоятельства, которые привели бы к желаемому результату в любой стране, для освобождения от нежелательного режима.

В статье представлено поведение Джина Шарпа, отдельных политологов и специальных служб в странах Восточной Европы и Ближнего Востока в направлении разжигания спланированных народных движений, которые должны были довести до утверждения проамериканского режима в вышеупомянутых территориях.

Джин Шарп в своих работах с точностью учебника представляет механизм Цветных революций со всеми подробностями, ожидая мирную деятельность властей. Однако любое массовое народное движение в конце концов перерастает в серьезные стычки, насилие и завершается большими человеческими потерями.

Colour Revolutions: Theory and Reality

Yetimyan Gagik

Summary

Key words: *folk movements, political developments, east-west relations, inter-state conflicts, collapse of the USSR, political theories*

At the end of the 20th century, as a result of impetuous geographical-political processes, national movements, named Colour or Velvet revolutions by American analyst, sociologist, theorist Gene Sharp, came up with a bang. During this period numerous theories, parties, social movements brought to uncompromising confrontations, unprecedented escalation of the East-West realtions, arms race, political crisis. The opposition of political titans, such as the USA and the USSR, ended with the loss and collapse of the USSR. Nevertheless, time showed that it was not enough for the USA absolute world establishment. It was necessary to separate Russia as well, to lower her authority in world politics, to turn other countries into the performers of the USA will, to become the only unlimited ruler of the world. Separate investigators studied the mechanisms of revolutions, the psychology of people during that period, the behavior of regimes, mass movements and other circumstances, which would bring to the desirable result in any country, for getting rid of undesirable regime.

In the article it is presented the behavior of Gene Sharp, as well as separate political experts and special services in the countries of Eastern Europe and the Middle East, in the direction of instigation of planned national movements, which should bring to the establishment of pro-American regime, in the above mentioned countries.

Gene Sharp presents the mechanism of Colour Revolutions in detail, expecting peaceful actions of the authorities. However, any mass national movement turns into a serious confrontation, violence and ends with great human loss.